

**Զարգացման ծառայությունների վարչություն (DDS)
Տարածքային կենտրոն կամ սպասարկող /կապալառու տեղեկություններ հավաքողի
(Whistleblower) բողոքարկման գործընթաց
Տեղեկություններ փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ և կոնտակտներ**

**Տարածքային կենտրոնի կամ սպասարկող /կապալառու տեղեկություններ հավաքողի
(Whistleblower) բողոքների սահմանում.**

Տարածքային կենտրոնի կամ սպասարկող /կապալառու տեղեկություններ հավաքողի վերաբերյալ բողոքները սահմանվում են որպես «տարածքային կենտրոնի կամ սպասարկողի/կապալառուի ոչ պատշաճ գործունեության » հաշվետվություն:

- «Տարածքային կենտրոնի ոչ պատշաճ գործունեություն» նշանակում է որևէ գործունեություն՝ իրականացված տարածքային կենտրոնի կամ աշխատողի պատասխանատուի կամ տարածքային կենտրոնի ,, խորհրդի անդամի կողմից՝ տարածքային կենտրոնի գործունեության իրականացման ընթացքում, որը հանդիսանում է նահանգային կամ դաշնային օրենքի կամ կարգավորման խախտում, պայմանագրի դրույթների խախտում, խարդախություն կամ ֆինանսական իրավախախտումներ, պետական սեփականության չարաշահում, կամ իրենից ներկայացնում է կոպիտ իրավախախտում, անիրավունակություն կամ անարդյունավետություն:
- «Սպասարկողի/կապալառուի ոչ պատշաճ գործունեություն» նշանակում է գործունեություն սպասարկողի/կապալառուի, աշխատողի, պատասխանատուի կամ սպասարկողի/կապալառուի խորհրդի անդամի կողմից DDS-ի կողմից ֆինանսավորվող ծառայությունների տրամադրման ընթացքում, որը հանդիսանում է նահանգային կամ դաշնային օրենքի կամ կարգավորման խախտում, պայմանագրի դրույթների խախտում, խարդախություն կամ ֆինանսական իրավախախտումներ, պետական սեփականության չարաշահում, կամ իրենից ներկայացնում է կոպիտ իրավախախտում, անիրավունակություն կամ անարդյունավետություն:

Զարգացման ծառայությունների վարչությունն (DDS-ը) ունի բողոքարկման զանազան գործընթացներ, որոնցից կարող են օգտվել սպասարկողները/կապալառուները, գործակալությունները, հիմնարկությունները, ծնողները և սպառողները: Դրանք ներառում են բողոքներ սպառողների իրավունքների վերաբերյալ, բողոքներ վաղ մեկնարկի վերաբերյալ, պատշաճ իրավական ընթացակարգի և միջնորդության խորհրդածողովի , Լանտերմանի ակտի արդար դատական լուծման հարցումներ, վերնագիր 17-ի բողոքներ; քաղաքացիների բողոքներ և մեկնաբանություններ (ցանկի համար տե՛ս <http://www.dds.ca.gov/Complaints/Home.cfm> կայքէջը): Այս բողոքարկման գործընթացներից յուրաքանչյուրն ունի լուծման առանձին և հստակ ընթացակարգեր: Գործընթացի այս կարգադրությունները վերաբերում են միայն տարածքային կենտրոնի կամ սպասարկող/կապալառու տեղեկություններ հավաքողի բողոքներին, ինչպես նկարագրված է վերևում:

Գաղտնիություն

Զարգացման ծառայությունների վարչությունը (DDS-ը) կանի հնարավոր ամեն ինչ **տեղեկություններ հավաքողի** մասին բողոքող անձի գաղտնիությունը պահպանելու համար, եթե բողոքողը գաղտնիություն հայցի: Մակայն, հազվադեպ, երբ DDS-ը իր կանոնադրական պարտականությունների պատճառով չի կարող պահպանել գաղտնիությունը (ներառյալ սպառողների առողջության և անվտանգության հարցերը և տարածքային կենտրոնի պայմանագրի պահպանումը), Վարչությունը կփորձի տեղեկացնել բողոքողին որոշակի տվյալներ հրապարակելու անհրաժեշտության մասին՝ մինչ անձը հաստատող տեղեկություններ հրապարակելը: Բացի այդ, բողոքողի անձը կարող է բացահայտվել, որոնք քրեական հետաքննություն անցկացնող օրենքի կատարումն ապահովող մարմիններին:

Բողոք ներկայացնելու մասին

Մեզ հարկավոր է ոչ պատշաճ գործունեության հստակ և հակիրճ նկարագրություն կամ որևէ վկայություն, որը կհաստատի այդ պնդումը:

Եթե դուք անուն կամ այլ տեղեկություններ չեք տրամադրում (վկաներ կամ փաստաթղթեր), որոնք հստակ սահմանում են, որ տվյալ անձը, ըստ ձեր պնդման, ոչ պատշաճ է գործել, ինչպես նաև տեղեկություններ այն տարածքային կենտրոնի կամ սպասարկողի/կապալառուի մասին, որտեղ այդ անձն աշխատում է, հնարավոր է, որ մենք բավարար տեղեկություններ չունենանք՝ հետաքննություն անցկացնելու համար: Պետք է ներկայացնել փաստաթղթերի պատճենները և ոչ թե բնօրինակները, քանի որ դրանք չեն վերադարձվելու:

Թեև բողոքները կարող են անանուն ներկայացվել, բայց եթե ոչ բավարար տեղեկություններ տրամադրվեն, և մենք ձեզ հետ կապվելու միջոցներ չունենանք, հնարավոր է, որ մենք չկարողանանք հետաքննել ձեր պնդումները:

Տեղեկություններ հավաքողի մասին ինչպես բողոք ներկայացնել

Բողոք կարելի է ներկայացնել՝ կապվելով.

- Համայնքային գործունեության ստորաբաժանման հետ՝

(916) 651-6309

ՖԱՔՄ՝ (916) 654-3641

1215 O Street, MS 8-20
Sacramento, CA 95814